

և ի Թագաւորութեան Պաշտից Փոքր Շահ Ապասին նորընծայ Թագաւորին , եւ ի Թվին որ ըստ Հայոց ՌՂ. եւ Գ . ի Մայիսի ամսոյ ի տասն , ի Լիվոնոյ , ի յիշատակ մշանջենաւոր եւ ի փառս Քրիստոսի : —Արդ ՚իթէ հաճոյ Թուեցի բարեպաշտութեան ձերում շնորհք Տեառն է , ըզՏեառնէ գոհացարուք , եւ եթէ ոչ՝ ներեցէք իմում տկարութեանս , եւ երկայնամիտ լերուք ընդ գործառնութիւնս , զի իբրեւ փորձ տպեցաք զսա աճիոգարար եւ յոյժ շտապմամբ ստեկս բազում նեղութեանց եւ անմխիթարութեանց , զոր կրէի միշտ վասն միայնութեան եւ պանդիտութեան իմոյ : —Վասն որոյ աղաչեմ զձեզ զամենեւեան որ հանդիպիք սմա , ստանալով զսա , յիշեցիք ի մաքրախալ յաղօթս ձեր , ըզվերոյսասացեալ զերջանիկ զՍաչատուր վարդապետն . եւ զձեռնտու բարեպաշտառէր վաճառականսն . եւ զիս զնուատս զՅովհաննէս Զուղացի սպասաւոր բանի , որ բազում աշխատանօք յայտարերեցի զտիպս եւ զտպագրութիւնս . եւ զբարեպաշտ ծնողս իմ , զհայրն իմ զհանգուցեալ մահապի Սիդիգարն , եւ զմայրն իմ զԱնամէլիքն , եւ զամենայն արեան մերձաւորս իմ զհոգեւորս եւ զմարմնաւորս , զկենդանիս եւ զհանգուցեալս . որպէս զի եւ գուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ , որ է աւրհնեալ յաւիտեանս , ամէն : Հայր մեր Վերջն է գրոյս :

1647

ԹՈՒՅՎԱՆԻՆ ՏՊԱԳՐԵԱԼ

1. ՊԱՐՁԱՏՈՒՄԱՐ ԱԶԱՐԻԱՅԻ .

(Տպագրեալ ի Զուղայ . ի Տպարանի Յովհ. Վ. Զուղայեցոյ .)

Մանօր. — Ա . Նրիցեան կ'ըսէ թէ Նոր Զուղայու Յամենաիրկիլ վանուց միաբան Յովհաննէս վարդապետ Զուղայեցի Լիվոնայէն վերագառնալով Նոր Զուղայի մէջլատպագրեց Պարզատումար Ս. զարեալիս՝ 1647 թուականին :

ԿՄ.ԳԵՏ

Յ Ի Ծ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն
 ՊԱՍՄԱՃԵԱՆ ԳՐԻԳՈՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Ի ՌԾԺԴ (=1764) թուականի հայոց եւ ի Սեպտեմբերի ամսոյ ի Թին , Իզմիրու առաջնորդ Առտապատցի Աբրահամ վարդապետն , վասն

ումանց պատճառաց յաքսորս առաքեցաւ ի յաթոն Էջմիածնի , յորոյ պատճառաւ բազում արտադողութիւնս կրեցաք, ընծայելով առ մեզ մեծամեծ վիշտս եւ ցաւս եւ եղաք ատելի աղբին , կաթողիկոսին, եւ աթոռոյն . զորոց պատճառն ի յիւրում տեղւոջն գրեալ տեսանի ի մէջ Պատմողորէն դրեցեալ Ողջունագրոյն : Ուստի եղեւ ի մէջ օրտի մերոյ հուր անշիջանելի մինչեւ ցայսօր՝ կալով մնալով ի մէջ մեծի խղճահաբութեան :

Ի ՌՄԺԴ (==1765) թուականի հայոց , Չուխանի կազ Շահնազար անուն ոմն, որ ի նստ գիւղն բնակի , ուստի սոյն անձս ի մեզանէ տասն եւ հինգ հազար զրչս քաւե արար եւ պանանջեաց ի մէնջ , այսու կերպիւս . որ իբր ի յազգայնոցն մէկն գնացեալ ի յիրուսաղէմ եւ մեռեալ անդ . ուստի ըստ ասից նորին , յառաջ քան զմնասնելն յայնմ անձին ի կենդանութեան իւրում, զվերոյիշեցեալ փողն , որպէս թէ տուեալ է Պատրիարքին Երուսաղէմի, որ նա իբր առաքելցէ ի ձեռս վիկիլին իւրոյ, որ նա աայցէ ի ձեռս նոյն Շահնազարին . ուստի հասեալ է նոյն փողն ի ձեռս վիկիլին . բայց նա, այսինքն՝ վիկիլին իւրացուցեալ զայն փողն եւ ոչ է հասուցեալ ի տեղի իւրում . ուստի այս պատճառաւ քաւե արարեալ ի մէնջ . եւ երեք անգամ ի արզ օսաւսի կոչեցեալ տեղւոջ տասջի մատնոյն ի դաս մտեալ . յորում ընդ նմին ներկայք էին երկու գլխաւոր դատաւորքն նստեալք՝ յաջմէ եւ անկէ ընդ փոխանորդին մեծի . որ եւ առ յապա թէպէտ նոյն Շահնազար կոչեցեալն ոչինչ օգտեցաւ, սակայն մեք ոչ սակաւ նեղութիւնս կրեցաք եւ ի դրամոց թօթափեցաք ի դրունս գատաւօրաց . ուստի Տէր հատուցէ զհատուցումն զործոց նորին :

Ի ՌՄԺԴ (==1765) թուականի հայոց , Տրապիզոնու Առաջնորդ Երզրնկացի գաւազան կոչեցեալ Աթանաս եպիսկոպոսն . որ էր այր սակաւհաւատ եւ ամբարիշտ , որոյ արարմանց պատճառաւ թէ զթ'նչ կրեցաք եւ համ ո'րքանս տուժեցաք եւ զվնասս կրեցաք հանդերձ քաղում արտադողութբ, որ միայն ինքն Աստուած եւ զխացողքն գիտեն, զոր Տէր հատուցէ նմա :

Ի ՌՄԺԴ (==1765) թուականին հայոց , լիբր եւ անհարկի դահաւար կոչեցեալ ասնեսալնի Սարգիս անուամբ ոմն, իւրոյ լրբութբն եւ զազիւ ձայնիւն եւ ասութբն, տ'յնքան, զի գրեթէ վրդովեաց զազգն բոլոր եւ զայրացոյց ի վերայ իւր զփոխանորդ արքային, որ բարկացեալ ի վերայ իւր, յինքննէ հրամայեաց եւ ըստ կամեցալութեան աքսորեաց ի Այնորոզ կղզւոջ . որոյ պատճառաւ աքսորմանցն տուժեցաք բազումս , լսելով

զնախատինս եւ կրօնի զոր ռադոզութիւնս վասն նորին լրբութեն զոր կրեցաք :

Ի ՌՄԺԵ (=1766) Թուականի հայոց եւ ի Մայիսի ԺԱ.ին հղեւ չարժ մեծ , զորս բազում շինուածք մեծամեծք անկեալ յերկիր կործանեցան , այսինքն՝ գեղեցիկ ապարանք եւ մզկիթք հաստատանիմք եւ բազում անձինք ի յամ ազգաց մնալով ի ներքոյ փուռածոց, զոր մեռան եւ ոչնչացան : Ուստի սոյն պատուհաս տեւեաց ընդ յերկար ժամանակս ամսով եւ տարով ի բազում ժամանակս . վասն որոյ ի յամ պահու սպասէին հօգիք մեր , բնակելով ի ներքոյ վրանաց ընդ յերկար ժամանակս :

Ի ՌՄԺԶ (=1767)ին եւ ի Յուլիս ամսոյն, ի պատրիարքական եկեղեցին , որ ի Ստամբուլ , զսուրբ Յովնանու Աւետարանչի խորանն հանդերձ նորին կից հղեալ արքոյն Նիկողայոսի խորանին , արքունական հրամանաւ քակեցաւ , ամբաստանութեամբ գրացի այլազգեաց , որ զայս ոչ այլ ինչ , եթէ ոչ վասն միոյ փոքի խայծի , կորուսանել զմեծագոյն պատաս . վասն ի յանվերջնանկատութենէ վերակացուաց եկեղեցւոյն խնայեցին զփոքրն , զսեծն կորուսին . ընդ նոսին զմեծ եկեղեցւոյն աւանդատան զկէսն եւ զքանի մի խցներս եւ զայլ տեղիս , որք վասն ռիսակալութեան իւրեանց , առանց խնայելոյ ըստ կամաց իւրեանց վկայեցին ասելով՝ այսքան տեղիք ի վերջէն շինեցեալք առանց արքունական հրամանի . այս կերպիւ բողոքելով ծանուցին առ արքունիս եւ զազաղակ մեծս բարձին հազարաւոր անձինք եւ ոտնահարս . բարին զմեզ եւ զեկեղեցին , մինչ ետուն քակել զասացեալ տեղիսն . ուստի յայսմ պատճառի մեծ զղրղումն եղև ի մէջ քաղաքիս , մանաւանդ ի մէջ ազգիս մերոյ . իսկ մեզ նախատինք մեծ եւ անշիջանելի հուր ի սիրտս , մէջբեկումն բոլորից եւ կոծ մեծ ազգին համայնից , որ զայս առ ի խրատ եւ ի զգուշութիւն , որ ո՛չ պարտ է աքացել ընդդէմ խըթանի եւ ո՛չ մաքառել ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս . զի ըստ որում հարկատու ծառայք եմք նոցա . որ պարտիմք կալ եւ մնալ ի հնազանդութեան նոցին , որ շիցէ ընդ դէմ հաւատոյ բանս :

Ի ՌՄԺԷ (=1768) Թուականին , ի Թէքիր տազու բնակիչք Յոյնք՝ մեծագոյն վիճօ տաին ընդ Հայոց բնակչացն անդ եղիւոց վասն Սուրբ Ոհաննէս Հայոց եկեղեցւոյն . վասն որոյ կամէին բողոքել առ արքունիս , յորմէ Թարց կարծեաց երեւէր ծագումն մեծի վնասու թէ՛ ժողովրդեանն Հայոց հասարակութեանցն եւ թէ՛ եկեղեցւոյն իւրեանց . վասն որոյ եւ մեր իմացեալ զգաւահանութիւնս նոցին , որ կամէին ձգել զմերայինսն ի մէջ խորագոյն գրոյ . վասն որոյ նկատելով զվերջն զիւն իրին , միջ-

նորդ արկաք յայնմ ժամանակին զպատրիարքն Յունաց, որ էր այր Աստուծոյ եւ խաղաղասէր օ այսինքն՝ Մերուհի Սամուէլ կոչեցեալն զպատրիարքն Կոստանդնուպօսոյ, որ էր յիրաւի ազնուատում վերջանկոտ եւ մեծահոգի այր ցանկայի . մա՛նաւանդ ի վերայ ամենայն ունէր սէր եւ գութ ի վերայ ազդիս եւ ի վերայ մերոյս նուաստութեան . վասնորոյ ստիպեալ ի յերոյս Ծնկեղծ սիրոյն որ ունէր ընդ մեզ , յորդորեւ զզազգն իւր , հանդերձ իւրոյ խրատական վարդապետութեամբն ազգր . խրատովն իւրով եւ վասն սիրոյ աղաչանացն մերոց շիջոյց Եոյն բարքոքումս , որք էին ի մէջ սրտից նոցա . ուստի թարց կարծեաց յայտնի երեւէր լինելն զհրդեհումն մեծագունի . ուստի սակա այս պատճառի բարգում վիշտս եւ տառապանս կրեցաք եթէ բանիւ եւ եթէ արդեամբ , որ մի՛ լիցի կորուստ առաջի Աստուծոյ :

Ի սոյն թուականիս եւս, Տիպածի օղու կոչեցեալ Սարգիս երէցն՝ Սամաթիոյ եկեղեցւոյն քահանայ , ըստահակեալ եւ ըստ իւրոյ կամաց եւ հաճութեան խօսէր եւ քրթնջէր ըստ ինքեան զոր ինչ ախորժէրն, զոր Տէր հատուսցէ նմաս :

Կրկին ի սոյն թուականիս , որ էր ՌՄԺԷ (==1768), ի յաւուրս պատերազմի որ ի մէջ թուրքաց եւ մսկօֆից , փոխանորդն ոսկեզլխուն մեծի Սեկրեկն պաշի կոչեցեալն , ոչ սակաւ նեղեաց եւ լեզուազարեաց զմեզ , խրոխտալով ի վերայ մեր , այսու ասութեամբ իւրով , դու ես որ զազգդ բոլոր լատինացուցեր եւ հնազանգացուցեր եկեղեցւոյն հուվմայ եւ հայրապետի նորին , ուստի սպասեմ դիպուկ ժամու եւ ժամանակի որ բերանով իմով ասացից եւ ձանուցից արքային իմոյ , որ ընկալցիս զփոխարէնն արարմանցդ քոց . վասն որոյ առ յայս բազում երկիւղս կրեալ եւ մեծապէս տուժեալ ձգելով զմեզ ի մէջ տազնապի եւ մինչեւ կարացաք կարկամեցուցանել եւ լռեցուցանել զլեզուս եւ զքերանս իւր , որ զայսոսիկ կրեցաք մատնորութբ հակառակորդացն եւ ի թշնամեաց , զորս ունեցաք ի յայն ժամանակին :

Ի ՌՄԺԸ (==1769) թուականին եւ ի Դեկտեմբերի մասոյն , Ղուրու պալլիս օղու կոչեցեալ Սրամանուն անձն , սուս քրիտասեանցն , որոյ չարաչար մատնութեանցն եւ ի չար զրպարտութեանցն նորին , ո՛րպիսի նեղութեանց կամ ո՛րքան տուժանաց դիպեցաք , միայն Աստուած դիտէ , որ եւ ինքն լիցի վրէժխնդիր :

Ի ՌՄԺԹ (==1770), ի Նոյեմբեր ամսոյ , Մովսէս անուն ոմն կարգաւոր միտեալ ի աղանդն այլազգեաց , ի յազգէս եւ ի հասարակութենէն

բազումս լեզուագարեցոյց կարծելով թէ ես իցեմ պատճառն • ուստի
դիտէ սրտագէտն Աստուած :

Ի սոյն Թուականիս ճօնճօռ անուն սեբաստացի Կարապետ վար-
դապետն, որ էր Առաջնորդ Սեպուհոյ լերինն , որ էր այր սոպո եւ ան-
ճոռնի , որոյ սակս արարմանցն մեծ մեծ վնասս կրեցի եւ նեղուցիւնս
բազումս :

Ի ՌՄԻ (1771) Թուականին հայոց , այրեցաւ սուրբ Լուսաւորչի եւ
կեղեցին Հայոց , որ ի Ղալաթիա եւ միտյն միջի քարաշէնն մնաց եւ
արար միջնաբեկս զմեզ եւ զբոլոր ազգս , որ այլ այնուհետեւ ո՛չ եղեւ
հնարս շինելոյ , այլ մնայ այնպէս մինչեւ ցայսօր :

Ի ՌՄԻԱ (—1772) Թուականին Սըսեցի Նփրեմ Կաթողիկոսն եղեւ
Կաթողիկոս Սըսոյ Աթոռոյն • եւ ի յայս միջոցի Աջոզահեան Նզիւպար
եպիսկոպոսն ի յանկեան ուրուք իւրովի լեալ Կաթողիկոս՝ եկն ի ըՍ-
տամպօլ վասն հաստատելոյ զԿաթողիկոսութիւն իւր • մինչ եղեալ էր
Կաթողիկոս Նփրմն , զորոյ զալստեամբն ոչ տակաւ վրդովմունս եղեւ ի
մէջ ազգին եւ ժողովուրդին յայնմիկ թէմի եղելոցն , զորս եղին ոմանք
պօղոսեանք եւ ապողոսեանք • ուստի եղեւ ալեկոծութիւն ի մէջ հասա-
բակութեան , բայց օրինաւոր Կաթողիկոսն նոյն Նփրեմն էր , զոր վասն
այսմ պատճառի բազում նեղութիւնք եղին թէ՛ ժողովրդեանդ եւ թէ՛ մեզ :

Ի ՌՄԻԱ (—1772) Թուականին , Թոխաթցի ճըռասան օղլու Կոչեց-
եալ Յարութիւն եպիսկոպոսն , տակեցալն եւ բանիւ եղեալն ի Սիմօն
Գաթողիկոսէն , որ սոյն եկն ի Ստամպօլ , որոյ զալստեանն որքան
վիշտս կրեցաք :

Ի սոյն Թուականին Պետրոս վարդապետն Ստամպօլցի , որ էր ա-
շակետ եւ ձեռնասուն Յակոբոյ պատրիարքին, որոյ զկնի վախճանման,
այսինքն՝ նոյն Պետրոս վարդապետին , ազգայինք նորին զմեծամեծ եւ
զթանկազին ինչս պահանջելով ի մէնջ , բազմիցս քաջքըչելով առ զը-
րունս դատաւորաց , որ զայս թ յաւուրս Աւագ Սուրբ Շաբաթի եւ ի յա-
ւուրս տէրուճական տօնից • ուստի ի յայս պատճառացս բազմիցս տու-
ժեցաք եւ վշտացաք մինչեւ ազատեցաք :

Կրկին ի սոյն Թուականիս , սին երիտասարդ Թովմա տնտէն Ար-
զրումեցի , սպասաւոր Աթանաս վարդապետի , առաջնորդին Իզնիմիտու :

ս աս ունեցաւ վէճս ընդ կնոջ ու մեծն . սոքա դիմեցին եւ բոշոքեցին առ Դուռն Արքունի, ուստի ի դրանէ եկն առ մեզ ոմն արքունահայն առ ի առնել զտեղեկութիւնս ի մէնջ զվիճմանէ նոցին . որ զայս ի յաւուրս կիւրակէի, որ տօն Վերափոխման ի ժամ Սրբոյ Պատարագի, եւ նկօղ անձն այնքան խտացաւ ի վերայ մեր մինչ զի կամէր մերկացուցանել ի զգեստուց պատարագին, որ հազիւ հաղ կարացաք միջոց եւ ժամանակ առնուլ մինչեւ ցաւարաիլ պատարագին :

Իսկ ի ՌՄԻԻ (=1773) թուականին, յառաջադէմքն ազգիս եւ անաշառ խորհրդոյն խորհրդականք հանդերձ խորհրդապետիւն խորհեցան եւ ի խորհուրդ մտին . որովհետեւ կախուած միւսից ի նմանէ էր եւ առ յայն դիտէին եւ խնդիրս առնէին ասելով . խօսեաց ո՛վ պետո՞յ մեր, զի լուրացուք եւ մեք ծառայք թոյ . զի թէպէտ սոքա ընդ իւրեւ եղեալքն էին իբր թէ խորհրդականք ամենեքեանք, բայց ոչ ամենեքեանք . այլ միայն մի էր որ խօսէր, մի էր որ քննէր, մի էր որ դատէր, մի էր որ վճռէր, մի էր որ յանդիմանէր եւ դատապարտս առնէր եւ մի էր որ մատնէր ի ձեռս զանազան վշտաց եւ ի մտառանջութեանց, զի ըստ որում ակն էր ազգին, որով լուսաւորէր իւրոյ թիւնայլի տունտուութեամբ եւ արեւ էր, որ խէթիւ հայեցմամբն կիզէր եւ տոչորէր զամենեւեանս . զի ըստ իւրոյ ներգործութեան եւ ըստ իւրոյ զօրութեան զմասնս բարդաւանս առնէր եւ զմասնս խորշակահարս, զմասնս ազգաւորս վերաւայնեալ արձանադուցանէր . իսկ զմասնս քրպէս ազգաւորաց հրատարակէր . ոմանց տաւն տայր վասն շինութեան եւ ոմանց վասն տապալման եւ կործանման, ոմանց հոտ ի մահուանէ ի մահ եւ սեռաց ի կենդանութենէ ի կենանս . զի ում կամէր ողորմէր եւ ում կամէր անողորմարար խտանայր փրբեւ զտէր եւ կամ քրպէս դատաւոր ի վերայ ամենեցունց . ուրեմն պա՛րտ էր զի՛ ըստ ամենայն ի կատարիցէր զյառաջադրեալ զոր՝ ծոզութիւնս իւր . զի ըստ որում ամենայն անուն ի գործոյն առեալ լինի, ուրեմն եթէ իսկապէս ցանկայր ի դործ անել եւ ի փորձ առնուլ զներգործութիւնս տէրութեան իւրոյ, ապա ընդէ՞ որ ոչ արար տէրութիւն՝ ազգին իւրոյն . աթոռոյն, որ ի յամենայնում նուազի միշտ եւ հանապազ եթէ Պարսիկք ի Պարսկաստանու եւ կամ Արարացիք ի յԱրարիոյ գալով եւ կեղեքելով կողոպտեն եւ յափշտակեն ազգի արիւնն եւ զուղեղն . բիւրաւոր, անհուն եւ զանհամար փոզս եւ գնան իւրաքանչիւր ի տեղիս իւր . մի՞թէ զօրութիւն եւ ներգործութիւն տէրութեան իւրոյ ի վերայ մեր կամեցաւ առնուլ զփորձ . որ ի յաւուր նեղութեանս եւ ի վերայ ամենայն տաժանափրութեանս մերոյ յաւել եւ զայս, որ գմեղ քլթն հազար զըշով պարտական է՛ան . սեք ըստ դիտման մերոյ եւ ըստ նախկին սովորութեան, վասն ծախուցն խիցրեցաք օգնութիւնս ի լինելն մեր պատրիարք ի ցայն ժամանակի Սրբ. Ծսողէմի Պատրիարք Կալապիտ վար-

դա պէս ՚ի ՚ի յաւուրս լայն թիւան մերոյ յստաջ չաւն զլինելն մեր վասն ծախուցն բացայայտեցաք իւրեանց ասելով զայս, թէպէտ Դուք կամիք ինձ լինել պատրիարք՝ բայց կարողութիւնս իմ որ վասն ծախուցն ո՛չ տանի կարն իմ . պատասխանեցին եւ ասացին, Աստուած օղորմած է , միայն թէ զու այժմս ի յանձն առ եւ մի՛ յետ Կահանջէր . վասն որոյ առ յայս խոստմանցն նոցին յուսալով խնդրեցաք զօգնութիւնս կամեցողութր եւ գիտութր նոցին , եւ ոչ թէ մենք մեզէն իւրովի . վասն որոյ ըստ խնդրոյ մերոյ առաքել առ մեզ զնոյն շափ փոշոս որպէս ի վեր անդր յիշեցաւ : բայց զկնի անցնելոյ յերկար ժամանակս եւ յետ վախճանելոյն զփողն առաքող կարապետ պատրիարքին . ապա պահանջեցին ի մէջ ինքն խորհրդապետն ընդ խորհրդակցօքն , տալով միմեանց կամածայն վկայութիւնս այսպէս զայն փողն , փոխ լինելոյ պայմանաւ առաքեցաւ առ քեզ եւ ո՛չ թէ պարզեւտ եղեւ . եւ այս ո՛չ ի զարմանք , որովհետեւ զառաքողն վախճանեալ եւ պահանջողք արդարախօսք եւ ճշմարտաբանք : Վասն որոյ հարկ արարին ի վերայ մեր զի զնոյն հասուցանիցեմք , ըստ վճռոյ եւ ըստ հրամանի նոցին . ուստի եւ մեր անճար մնացեալ հատուցաք զնոյն շափով այնու , որ յստաջագոյն պատրաստեալ էաք զոմանս զսպասս եկեղեցականս, ակնեղէնս, ոսկեղէնս եւ կերպասեղէնս ի յիշատակ Սրբոյն Յակոբայ , որ յԾրուսագէմ , որպէս որ ի վերայ իւրաքանչիւրոց զրեցուցեալ էաք . ուստի տալով մեր զնոսս զերծուցաք զօձիս մեր ի ձեռաց խառսորտաց . զի ըստ որում ոչ ունեցայ կարողութիւնս զի տայցէի զզրամս եւ ոչ բաւէր կարն իմ . զի զղէմ առնիցէի կամաց իւրեանց : Վասն որոյ հասաք ի յետին յաղթատութեան եւ ի ջքաւորութեան . ահա այս էր պտուղ իրաւասու թեանց իւրեանց :

Ապա զկնի վազվազակի անողորմօքար յարեան ի վերայ իմ վըկայք մեղաց եւ ստեղին ինձ ի յանաչառութիւնս իւրեանց եւ բռնութր հարկեցին խստիւ մեծաւ եւ ետուն գրել զմուրհակս պարտուց վասն վերողբեալ փողոյն եւ տալով մեզ զնել զթուականն նոյնոյ մուրհակին յստաջ եւ անցեալ ժամանակաւ . այսինքն՝ իբր ի յօրէ կարապետ պատրիարքի կենդանութեան գրեցեալ . վասն որոյ անաչառ խորհրդակալք . զոր ինչ կամեցան եւ խօսեցան ըստ ամենայնի հնազանդեցաք վասն ահի նոցա , որ ոչ երբեք կարացաք ասել բանս ինչ ընդ գլմ կամաց նոցին . վասն զի գաղան է որ զոչէ եւ խրոխտայ կրճտելով զատմունս, ո՛վ է որ ոչ սարսիցի . որ զայսոսիկ դործաղութիւնս զոր գործեցաւ ոչ ի յայլ ուստեքէ գային , եթէ ոչ ի խէթիւ հայեցմանէ յարեզականէ յայնմանէ խորհրդապետէ , որ գօրծեաց եւ կատարեաց զգօք՝ եւ զընթաց իւր եւ զմեղ ժամանեցոյց ի յայս դատնութիւնս եւ ի յետին չըքաւորութիւնս , յամենայնէ զրկելով զմեզ , որ եւ Ած լիցի վրէժխցի՞ զիր :